ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԵՐԵՎԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԻ
ՊԵՏ ՊԱՐՈՆ ԷՄԻԼ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հարգելի պարոն Ղազարյան,

Հայտնում եմ Ձեզ, որ 2026 թ. փետրվարի 25-ից մինչև 2026թ. մայիսի 25-ը ընկած ժամանակահատվածում իրականացրել եմ հետևյալ աշխատանքները՝

1. ՍԱՏՄ ղեկավարի հրամանի համաձայն մասնակցել եմ պեստիցիդների և ագրոքիմիկատների իրացման, պահման և փոխադրման աշխատանքների կատարմանը:

2. ՍԱՏՄ ղեկավարի հրամանի համաձայն մասնակցել եմ Երևան քաղաքում գործող ձվի իրացմամբ զբաղվող տնտեսվարող սուբյեկտների մոտ դիտարկմանը:

3. Տնտեսվարողների կողմից ՍԱՏՄ ներկայացված հայտերին ի պատասխան իմ կողմից տրամադրվել է թվով 21 համապատասխանության տեղեկանքներ (ձև 8):

4. ՍԱՏՄ ներկայացրած դիմումների համաձայն սննդի շղթայում գործունեություն իրականացնող տնտեսավարողներին իմ կողմից կազմվել և տրամադրվել է փոխադրամիջոցների սանիտարական անձնագիր:

5. Մասնակցել եմ վտանգավոր սննդամթերքի ոչնչացման գործընթացներին

6. ՍԱՏՄ ղեկավարի հրամանի համաձայն մասնակցել եմ արտապլանային ստուգումներին Երևանի տարածքում:

7. N1889-Ա հրամանի հիման վրա մասնակցել եմ անասնահամաճարակային մշտադիտարկման գործընթացներին:

8. Մասնակցել և իրականացրել եմ պլանային ստուգումներ՝ Երևանի տարածքում գտնվող մսուր մանկապարտեզ ՀՈԱԿ – ներում, հանրային սննդի կետերում և իրացման կետերում որի շրջանակներում ուսումնասիրել եմ ստուգման իրականացման համար պահանջվող փաստաթղթային փաթեթը, պարզաբանել և արձանագրել եմ մի շարք խախտումներ:

9. Համաձայն հանձնարարականների իրականացրել եմ նմուշառման գործընթաց(իմ կողմից տրամադրվել է նմուշներն ուղեկցող նամակներ ՀԱԲԼԾԿ ՊՈԱԿ ուղարկելու նպատակով համաձայն ցուցանիշների):

ԵՐԵՎԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԻ ՓՈՐՁԱԳԵՏ՝ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ



25.05.2026թ.